ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է
գիտական խորհրդի
2022թ. _____ -ի նիստում

Ռեկտոր _____ Ե.Վ. Վարդանյան

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Կրթական աստիճանը՝ բակալավր
Կրթական մոդուլ՝ 6.22ԷԻԿ013
Կրեդիտ՝ 6

Մասնագիտություն՝
«101801.00.6 - Սերվիս»

Կրթական ծրագիր՝
«101801.01.6 - Սերվիս»

ԵՐԵՎԱՆ 2022

ՀԱՍՏԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Կազմող՝

Տաթևիկ Եղոյան տ.գ.թ., դոցենտ

_____

(ստորագրություն)

Գրախոս՝

Արա Հովհաննիսյան տնտ.գ.թ., դոցենտ,
«Սիփիէս Օյլ Քորփորեյշն»
ՍՊԸ-ի փոխնախագահ

_____

(ստորագրություն)

Քննարկվել և հավանության է արժանացել.

Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման ամբիոնի 2022թ. օգոստոսի 31-ի թիվ 1 նիստին:

Ամբիոնի վարիչ՝

Տաթևիկ Եղոյան տ.գ.թ., դոցենտ

_____

(ստորագրություն)

Քաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետի 2022թ. սեպտեմբերի 12-ի թիվ 1 նիստին:

Ֆակուլտետի դեկան՝

Վալերիկ Հարությունյան տ.գ.թ., դոցենտ

_____

(ստորագրություն)

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ

մասնագիտացնող ամբիոնների հետ

Դասընթացի անվանում Վիճակագրության տեսության հիմունքներ
Կրթամոդուլ 6.22ԷԻԿ013

№	Ամբիոն	Ամբիոնի վարիչ	Ստորագրություն	Նշումներ
1.	Գեոէկոլոգիա և կենսաանվտանգություն	Շահինյան Սամվել Մարտինի		

1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ, ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

№	Ուսումնական աշխատանքի տեսակը	Ժամաքանակը
Կրթական մոդուլ՝6.22ԷԻԿ013, կրեդիտային արժեք՝6, կիսամյակ՝ II		
1	Դասախոսություններ	32
2	Գործնական պարապմունքներ	32
3	Ուսանողի ինքնուրույն աշխատանք	116
4	Ատեստավորումներ.	
4.1	ընթացիկ*	+
4.2	եզրափակիչ (քննություն)*	+
	Ընդամենը՝	180

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ զարգացնել վերլուծական մտածողություն, փոխանցել սոցիալ-տնտեսական երևույթների և գործընթացների վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրման, մշակման և վերլուծության գործնական հմտություններ:

Դասընթացը յուրացնելու համար անհրաժեշտ են գիտելիքներ հետևյալ դասընթացից.

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմունքներ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.

6.22ԷԻԿ013

(գիտելիք և իմացություն)

- ձևակերպել վիճակագրության հիմնական առանձնահատկությունները,
- ներկայացնել վիճակագրության հետազոտման փուլերը, յուրաքանչյուր փուլում իրականացվող գործողությունները,
- նկարագրել սերվիսի ոլորտում կիրառվող վիճակագրական ցուցանիշների արտահայտման ձևերն ու տեսակները,
- սահմանել սերվիսի ոլորտի վիճակագրության հիմնական տարրերը, բացատրել դրանց նշանակությունն ու համապատասխան ցուցանիշների հաշվարկման անհրաժեշտությունը ծառայությունների ոլորտում աշխատող ձեռնարկության համար,

(կարողություններ)

- իրականացնել սոցիալ - տնտեսական երևույթների վերաբերյալ գիտականորեն կազմակերպված և միասնական ծրագրով իրականացվող հետազոտություն,
- բացահայտել տեղեկատվության հավաքագրման հավաստի աղբյուրները,
- ամփոփել հավաքված տեղեկությունները խմբավորման մեթոդով և կատարել հստակ եզրակացություններ ճշգրիտ վերլուծություն իրականացնելու միջոցով,
- որոշել սերվիսի ոլորտի վիճակագրության կարևորագույն ցուցանիշները և վերլուծել վիճակագրական հաշվարկների արդյունքները:

3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՏԻԿ ԾՐԱԳԻՐԸ

3.1 ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

№	Կրթական մոդուլի և թեմայի անվանումները	Ժամաքանակը
1	6.22ԷԻԿ013	32
1.1	Դասընթացի առարկայական ծրագրի ներկայացում: Վիճակագրություն առարկան, ծագումը և զարգացումը:	2
1.2	Վիճակագրության հիմնական առանձնահատկությունները: Վիճակագրական հետազոտման հիմնական փուլերը:	2

1.3	**Վիճակագրական դիտարկում. առաջնային տեղեկատվության հավաքագրում:**	**6**
1.3.1	«Վիճակագրական դիտարկում» հասկացությունը և անցկացման փուլերը:	2
1.3.2	Վիճակագրական դիտարկման ծրագրամեթոդաբանական և կազմակերպական հարցերը:	2
1.3.3	Վիճակագրական դիտարկման ձևերը, տեսակները և եղանակները:	2
1.4	**Վիճակագրական տվյալների ամփոփում և խմբավորում:**	**6**
1.4.1	Վիճակագրական տվյալների ամփոփում:	2
1.4.2	Վիճակագրական տվյալների խմբավորում:	2
1.4.3	Վիճակագրական աղյուսակներ, գրաֆիկներ:	2
1.5	**Վիճակագրական վերլուծություն:**	**8**
1.5.1	«Վիճակագրական ցուցանիշներ» հասկացությունը, արտահայտման ձևերը և տեսակները:	2
1.5.2	Բացարձակ մեծություններ:	2
1.5.3	Հարաբերական մեծություններ:	2
1.5.4	Միջին մեծություններ:	2
1.6	**Տնտեսական ինդեքսներ:**	**4**
1.6.1	Տնտեսական ինդեքսների դասակարգումը:	2
1.6.2	Անհատական և ընդհանուր ինդեքսներ:	2
1.7	**Վիճակագրական հետազոտության առանձնահատկությունները սերվիսի և զբոսաշրջության ոլորտում:**	**4**
1.7.1	Սերվիսի ոլորտի ձեռնարկությունների գործունեության վերլուծություն վիճակագրական հիմնական ցուցանիշների միջոցով:	2
1.7.2	Զբոսաշրջության ոլորտի վերլուծություն վիճակագրական հիմնական ցուցանիշների միջոցով:	2

3.2 ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ

№	Գործնական պարապմունքի թեմայի անվանումը	Ժամաքանակը
1	**6.22ԷԻԿ013**	**32**
1.1	Վիճակագրության ուսումնասիրման հիմնական խնդիրները (քննարկում ամբողջ խմբով):	2
1.2	Միջին վիճակագրական ընտանիքի ամսական ծախսերի հաշվարկ, ծառայությունների վրա կատարված ծախսերի առանձնացում (վերլուծությունների իրականացում և եզրակացությունների ձևակերպում 2-3 ուսանողից կազմված խմբերով):	2
1.3	Վիճակագրական հետազոտման փուլերը: Վիճակագրական հետազոտման առաջին փուլ՝ վիճակագրական դիտարկում,	2

	դիտարկման ձևերը, տեսակները, եղանակները (օրինակների քննարկում՝ 2-3 ուսանողից կազմված խմբերով):	
1.4	Սոցիալ-տնտեսական որևէ երևույթի (օրինակ՝ որևէ ընկերության կողմից մատուցվող ծառայության նկատմամբ պահանջարկի բացահայտում) վերաբերյալ վիճակագրական հետազոտության ծրագրի կազմում (խմբային աշխատանք 2-3 ուսանողից կազմված խմբերով):	2
1.5	Ընտրված սոցիալ-տնտեսական երևույթի վերաբերյալ վիճակագրական հետազոտության իրականացման հարցաշարի մշակում համապատասխան ծրագրերով, ինչպես օրինակ՝ Google Forms, Survey Monkey (խմբային աշխատանք 2-3 ուսանողից կազմված խմբերով):	2
1.6	Վիճակագրական հետազոտման երկրորդ փուլ՝ վիճակագրական տվյալների ամփոփում և խմբավորում: Օրինակների քննարկում՝ 2-3 ուսանողից կազմված խմբերով:	2
1.7	Վիճակագրական աղյուսակների և գրաֆիկների կազմում (խմբային աշխատանք 2-3 ուսանողից կազմված խմբերով):	2
1.8	Իրականացված վիճակագրական հետազոտության արդյունքների ներկայացում պրեզենտացիայի տեսքով (խմբային աշխատանք 2-3 ուսանողից կազմված խմբերով):	4
1.9	Խմբավորված տվյալների վերլուծություն վիճակագրական ցուցանիշների միջոցով (քննարկում ամբողջ խմբով):	2
1.10	Հարաբերական մեծություններ (խնդիրների լուծում):	2
1.11	Միջին մեծություններ (խնդիրների լուծում):	2
1.12	Տնտեսական ինդեքսներ (խնդիրների լուծում):	2
1.13	Վիճակագրական հիմնական ցուցանիշների միջոցով սերվիսի ոլորտի ձեռնարկությունների գործունեության արդյունավետության վերլուծություն, մրցակցային առավելությունների բացահայտում (խմբային աշխատանք 2-3 ուսանողից կազմված խմբերով):	2
1.14	ՀՀ զբոսաշրջության ոլորտի արդի վիճակի ուսումնասիրություն և վերլուծություն (քննարկում և վերլուծություն ամբողջ խմբով):	2
1.15	Անցած թեմաների ամփոփում:	2

3.3 ՈՒՍԱՆՈՂԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

№	Ինքնուրույն աշխատանքի տեսակը կամ թեմայի անվանումը	Ժամաքանակը
1	**6.22ԷԻԿ013**	**116**
1.1	Հասարակական կյանքի որևէ երևույթի կամ գործընթացի վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության հավաքում՝ անմիջական հարցման եղանակով:	16

1.2	Ամփոփման միջոցով ստացված նյութերի վերլուծություն և համապատասխան եզրակացությունների գրառում:	20
1.3	Կատարված վիճակագրական հետազոտության ներկայացման համար պրեզենտացիայի պատրաստում:	20
1.4	Սերվիսի ոլորտի ձեռնարկությունների գործունեության վերլուծություն հիմնական վիճակագրական ցուցանիշների կիրառմամբ:	10
1.5	Զբոսաշրջային ոլորտի վիճակագրական վերլուծություն: Վերլուծական նյութերի նախապատրաստում:	10
1.6	Լրացուցիչ գրականության ուսումնասիրում:	20
1.7	Քննության նախապատրաստում:	20

3.4 ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄՆԵՐ

3.4.1 **Ընթացիկ ատեստավորում:**

6.22ԷԻԿ013

Կիսամյակի սկզբում ուսանողները բաժանվում են խմբերի՝ յուրաքանչյուր խմբում 2÷3 ուսանող և տրվում է հանձնարարություն՝ իրականացնել որևէ սոցիալ-տնտեսական երևույթի վերաբերյալ վիճակագրական հետազոտություն: Դասախոսությունների ընթացքում ուսանողներին տրվում են անհրաժեշտ ցուցումներ և հանձնարարություններ՝ ըստ օրվա դասախոսության թեմայի: Կիսամյակի 10-րդ շաբաթվա ընթացքում ուսանողները ներկայացնում են իրականացված հետազոտության արդյունքները՝ պրեզենտացիայի տեսքով:

Իրականացված վիճակագրական հետազոտությունը գնահատվում է 20 միավորանոց սանդղակով: Անկախ այն հանգամանքից, որ ուսանողները կատարում են խմբային աշխատանք, յուրաքանչյուր ուսանող գնահատվում է առանձին՝ հաշվի առնելով նրա կատարած անհատական աշխատանքը և հարցերին պատասխանելու կարողությունը:

20 միավոր ստանալու համար ուսանողները պետք է կարողանան հստակ ներկայացնել հետազոտության արդյունքները, պատասխանել դասախոսի և խմբի մյուս ուսանողների բոլոր հարցերին: Այն ուսանողները, ովքեր հետազոտությունը ներկայացնելիս չեն ստանում առնվազն 14-17 միավոր, եզրափակիչ քննությանը չեն կարող գնահատվել գերազանց միավորով (մանրամասն՝ 3.4.2-ում):

3.4.2 **Եզրափակիչ ատեստավորում (քննություն):**

6.22ԷԻԿ013

Ուսանողը ներկայանում է եզրափակիչ ատեստավորմանը՝ քննությանը, որն իրականացվում է հարցատոմսերով: Դասընթացի հարցաշարը կցված է սույն՝ 3.4.2 բաժնին, որը կիսամյակի սկզբին տրամադրվում է ուսանողին: Քննությունն իրականացվում է գրավոր կամ բանավոր, որի ընթացքում ստուգվում է ուսանողի ձեռք բերած վերջնարդյունքները: Ուսանողի գնահատումն իրականցվում է 20 միավորանոց սանդղակով:

Վերջնարդյունքների գնահատման չափանիշ

Գնահատականը / Միավորը	Դասընթացի վերջնարդյունքների (գիտելիք և իմացություն, կարողություն) գնահատման չափանիշները
Անբավարար 0÷7 միավոր	Ուսանողը չունի վիճակագրության վերաբերյալ հիմնարար գիտելիքներ, չի դրսևորում վերլուծական մտածողության հատկանիշներ, չի կատարել ընթացիկ ատեստավորման առաջադրանքը կամ ստացել է անբավարար, չի պատասխանում քննական տոմսի հարցերին:
Բավարար 8÷13 միավոր	Ուսանողն ունի ամփոփ գիտելիքներ, կատարել է ընթացիկ ատեստավորման առաջադրանքը զգալի բացթողումներով, պատասխանում է քննական տոմսի առնվազն երկու հարցի, գաղափար ունի վիճակագրական տվյալների խմբավորումների, վիճակագրական ցուցանիշների համակարգի վերաբերյալ:
Լավ 14÷17 միավոր	Ուսանողն ունի լիարժեք գիտելիքներ վիճակագրական դիտարկման ձևերի, մեթոդների, տվյալների ամփոփման և խմբավորումների տեսակների, վիճակագրական հիմնական ցուցանիշների մասին, աննշան սխալներով կատարել է ընթացիկ ատեստավորման առաջադրանքը, ցուցաբերել է վերլուծական մտածողության հատկանիշներ, ինքնուրույն աշխատելու ունակություն, պատասխանում է քննական տոմսի առնվազն 2 հարցի և ամբողջությամբ կամ մասնակի լուծում է խնդիրը:
Գերազանց 18÷20 միավոր	18-19 միավոր ստանում է այն ուսանողը, ով ունի համակարգված գիտելիքներ վիճակագրական տվյալների դիտարկման ձևերի, մեթոդների, ամփոփման և խմբավորման սկզբունքների, վիճակագրական առանցքային ցուցանիշների մասին, կատարել է տրված առաջադրանքներն աննշան սխալներով, ուսումնասիրել և յուրացրել է զբոսաշրջային և սերվիսի ոլորտների ծառայությունների վիճակագրության վերաբերյալ հիմնական և օժանդակ գրականությունը, դրսևորել է վերլուծական մտածողություն, ինքնուրույն աշխատելու ունակություն, կարող է կատարել վիճակագրական վերլուծություն, պատասխանում է քննական տոմսի բոլոր հարցերին և նկարագրում է զբոսաշրջային ծառայությունների վիճակագրությունը:
	20 միավոր ստանում է այն ուսանողը, ով ունի բացառիկ գիտելիքներ վիճակագրության վերաբերյալ, անթերի կատարել է զբոսաշրջային ծառայությունների վիճակագրության վերաբերյալ տրված առաջադրանքը, պատասխանում է դասա-

	խոսի լրացուցիչ հարցերին, ներկայացրել է սերվիսի ոլորտի վիճակագրական վերլուծություն:

ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ
6.22ԷԻԿ013

1. Վիճակագրության ծագումը և զարգացումը:
2. «Վիճակագրություն» առարկան, դրա հիմնական գծերը և բնութագրերը:
3. Վիճակագրական դպրոցներ:
4. Վիճակագրության հիմնական առանձնահատկությունները:
5. Վիճակագրական հետազոտման հիմնական փուլերը:
6. Վիճակագրական դիտարկման՝ առաջնային տեղեկատվության հավաքագրման գործընթաց:
7. Վիճակագրական դիտարկման ծրագր մեթոդաբանական և կազմակերպական հարցերը:
8. Վիճակագրական դիտարկման ծրագիր:
9. Վիճակագրական դիտարկման ձևերը, տեսակներն ու եղանակները:
10. Ընթացիկ և ընդհատվող դիտարկումներ:
11. Համատարած և ոչ համատարած դիտարկումներ:
12. Վիճակագրական տեղեկությունների ստացման եղանակները:
13. Վիճակագրական տվյալների ամփոփում:
14. Վիճակագրական ամփոփման տեսակները:
15. Վիճակագրական խմբավորումների տեսակները:
16. Վիճակագրական տվյալների խմբավորում:
17. «Վիճակագրական ցուցանիշներ» հասկացությունը, արտահայտման ձևերը և տեսակները:
18. Վիճակագրական ցուցանիշների համակարգ, ցուցանիշ-կատեգորիաներ:
19. Անհատական և հանրագումարային ցուցանիշներ:
20. Ծավալային և հաշվարկային ցուցանիշներ:
21. Բացարձակ մեծություններ:
22. Անհատական և գումարային բացարձակ մեծություններ:
23. Բացարձակ մեծությունների չափման միավորները:
24. Հարաբերական մեծություններ:
25. Դինամիկայի հարաբերական ցուցանիշ:
26. Պլանի հարաբերական ցուցանիշ:
27. Պլանի կատարման հարաբերական ցուցանիշ:
28. Կառուցվածքի հարաբերական ցուցանիշ:
29. Կոորդինացման հարաբերական ցուցանիշ:
30. Ինտենսիվության հարաբերական ցուցանիշ:
31. Համեմատության հարաբերական ցուցանիշ:
32. Միջին մեծություններ:
33. Միջին մեծությունների տեսակները:

34. Տնտեսական ինդեքսներ:
35. Անհատական և ընդհանուր ինդեքսներ:
36. Զբոսաշրջային ծառայությունների վիճակագրություն:
37. Սերվիսի ոլորտի կազմակերպությունների գործունեության վիճակագրական վերլուծություն:

ՔՆՆԱԿԱՆ ՀԱՐՑԱՏՈՄՍԻ ՕՐԻՆԱԿ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2022-2023 ուստարվա II կիսամյակ

Ֆակուլտետ Քաղաքային տնտեսություն և էկոլոգիա
Ամբիոն Էկոնոմիկա, իրավունք և կառավարում
Դասընթաց (կրթամոդուլ) 6.22ԷԻԿ013 - Վիճակագրության տեսության հիմունքներ

ՔՆՆԱԿԱՆ ՏՈՄՍ №1

1. Վիճակագրության ծագումը և զարգացումը: (0÷3 միավոր)
2. Վիճակագրական տվյալների խմբավորում: (0÷5 միավոր)
3. Հարաբերական մեծություններ: (0÷6 միավոր)
4. Խնդիր: (0÷5 միավոր)

   Հյուրանոցի երեք մասնաճյուղերում ամսական կտրվածքով սենյակների վարձակալման վերաբերյալ ունենք հետևյալ տվյալները (հազ. դրամ):

Մասնաճյուղ	Վարձակալության է հանձնվել հուլիս ամսին	Վարձակալության է հանձնվել օգոստոս ամսին	
		Պլան	Փաստացի
1	150	170	180
2	170	190	210
3	210	230	200
Ընդամենը	530	590	590

   Պահանջվում է հաշվարկել սենյակների վարձակալման հանձնման պլանային առաջադրանքի, պլանի կատարման և դինամիկայի հարաբերական մեծությունները հյուրանոցի երեք մասնաճյուղերից յուրաքանչյուրում և երեքում միասին վերցված: Ցույց տալ հաշվարկված հարաբերական մեծությունների միջև գոյություն ունեցող փոխադարձ կապը:
5. Լրացուցիչ հարցեր: (0÷1 միավոր)

Հաստատված է ԷԻԿ ամբիոնի նիստում _____
(ամբիոնի անվանումը) *(ամիս, ամսաթիվ)*

Ամբիոնի վարիչ՝ _____
(ստորագրություն)

4. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Կազմված է դասընթացի տվյալների բազա, որը ձևավորված է փաստաթղթային և էլեկտրոնային տեսքով:

Դասընթացի տվյալների բազան ներառում է.

- դասընթացի ծրագիրը, որն առկա է ամբիոնում,
- դասընթացի ուսումնական բաղադրիչներին վերաբերող ուսումնամեթոդական նյութերը՝ դասախոսությունների կոնսպեկտը, գործնական աշխատանքների կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական ցուցումները և ձեռնարկները,
- դասընթացին վերաբերող ժամանակակից տեսալսողական միջոցները, էլեկտրոնային ցուցադրանյութերը,
- դասընթացի ուսումնական բաղադրիչներին վերաբերող գրականության ցանկը, գրականության էլեկտրոնային տարբերակները,
- ինֆորմացիայի որոնման համակարգեր՝ էլեկտրոնային գրադարանից օգտվելու համար,
- եզրափակիչ ատեստավորման անցկացման հարցատոմսերը և հարցաշարը (բերված է 3.4 բաժնում), որոնք ուսումնական տարվա սկզբին ներկայացվում են ուսանողներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Պետրոսյան Ա.Ն. Վիճակագրության ընդհանուր տեսություն, ուսումնական ձեռնարկ, Տնտեսագետ, Երևան, 2008, 282 էջ: ISBN 978-99941-51-76-9:
2. Александрова А. Ю. Статистика туризма, М., Федеральное агентство по туризму, 2014, 464: ISBN 978-5-4365-0136-9
3. Елисеева И.И. Статистика, учебник, М., Проспект, 2010, 443: ISBN 978-5-392-00688-5
4. Панова А.В. Статистика туризма, Учебное пособие, ИНФРА-М, 2020, 287.
5. Салин В.Н., Чурилова Э.Ю., Шпаковская Е.П. Статистика, учебное пособие, КНОРУС, 2012, 288. ISBN 978-5-406-06094-0

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Վիճակագրական ցուցանիշների մեթոդաբանական պարզաբանումներ - [https:// arm stat.am/file/article/sv0319a6300.pdf].
2. Статистика услуг – [http://www.econwiki.ru /content/ %D1%81%D1%82%D0% B0% D1% 82%D0%B8%D1%81%D1%82%D0%B8%D0%BA%D0%B0-%D1%83% D1% 81%D0%BB% D1%83%D0%B3].
3. Система статистических показателей, характеризующих эффективность функционирования сферы услуг – [https://cyberleninka.ru/article/n/sistema-statisticheskih-pokazateley-harakterizuyuschih-effektivnost-funktsionirovaniya-sfery-uslug].

4. Система показателей рынка услуг, методика их исчисления – [http://www.bibliotekar.ru/economicheskaya-statistika/249.htm].

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐ

1. Microsoft Word ԾՓ-ի ակտուալ տարբերակը:
2. Microsoft Excel ԾՓ-ի ակտուալ տարբերակը:

ՀԱՄԱԼՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Համակարգիչներով հագեցած լսարան.

գործնական աշխատանքների ժամանակ ուսանողները կատարում են վերլուծություններ՝ օգտվելով որոնողական-տեղեկատվական կայքերից, անհատական և խմբային աշխատանքներ՝ կիրառելով ծրագրային փաթեթներ: Գրեթե միշտ առաջանում է դժվարություն՝ համապատասխան լսարանի տրամադրման խնդիրը լուծելիս, քանի որ դասախոսների մեծամասնությունը նման պահանջ ունի:

5. ՄԻՋԴԱՍԸՆԹԱՑԱՅԻՆ ԿԱՊԵՐ (ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ)

Տվյալ դասընթացի նյութերն օգտագործող այլ դասընթացների անվանումը	Ամբիոն	Ամբիոնի հաստատում	
		անուն ազգանուն	ստորագրություն
Սոցիոլոգիայի հիմունքները սերվիսում	Էկոնոմիկա, իրավունք և կառավարում		
Ձեռնարկատիրական գործի պլանավորում և կառավարում սերվիսում	Էկոնոմիկա, իրավունք և կառավարում		
Ռիսկերի կառավարումը բիզնեսում	Էկոնոմիկա, իրավունք և կառավարում		